ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM
הפטריארכיה הארמנית בירושלים
بطريركية الأرمن
PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

ԳԻՐ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Յիսուսի Քրիստոսի ծառայ՝
Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան,
Հայ Պատրիարք Երուսաղէմի և
Սրբոց Յակոբեանց Առաքելական Սուրբ Աթոռոյ,
Օրհնութեամբ և գնահատանքով կը պարգեւատրենք

✠ ՕՐԻՈՐԴ ԱՍՏՂԻԿ ՉԱՄՔԵՐԹԸՆ ✠

Օգնական Ընդհանուր Վարիչի
Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան
Հայկական Բաժանմունքին, որ ի Լիզպոն, Փորթուկալ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Իր հաւատարիմ և անձնուէր ծառայութեան և գործակցութեան համար,
որպէս գիտակից և պատասխանատու գործադիր,
միջազգային համբաւի տէր և Հայ ազգի զաւակ՝
Գալուստ Սարգիսի Կիւլպէնկեան բարերարի
կտակին առաջադրութիւններուն:

Օրիորդ Աստղիկ Չամքերթը բազում տարիներէ ի վեր
նախանձախնդրութեամբ հետապնդող ու քաջալերող կը հանդիսանայ
Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան
ազգօգուտ նպատակներու իրագործման:

Իր բազմաթիւ վարչական պատասխանատու պարտաւորութեանց
կարգին, ան Հայկական կրթարաններուն յառաջդիմութեան և բարւոք
ընթացքին քաջալեր հանդիսացող խորհրդականն է յանուն
Հիմնարկութեան.

digitised by A.R.A.R.@

ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM
بطريركية الأرمن הפטריארכיה הארמנית בירושלים
PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

Ան ոչ միայն Հայ մշակոյթի արուեստագէտներուն և մտաւորականներուն յուսադրիչ և մղիչ բարեկամն է, Հայ մշակոյթը տարածելու ցանկութեամբ, այլ ինքն իսկ յայտնուեցաւ նաև շնորհալի գրողի իր տաղանդով:

Իր հայկական ժառանգութեան գիտին ի խնդիր և հետապնդումով, ան կը հասնի իր արմատներուն, և զանոնք կը վերակենդանացնէ իրեն այնքան ընտանի ֆրանսերէն լեզուով հատորի մը մէջ, զայն կոչելով, **"Arménie: Mes Racines"**:

Հայ մշակոյթի և Հայ կրթութեան տարածման ջատագովին և անխոնջ նուիրեալին արժանի պարգևատրումն է այս շքանշանը Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան:

Երուսաղէմի Սրբավայրերու օրհնութիւնը կը հայցենք որ Տէրը պարգեւէ Օրիորդ Աստղիկ Չամքերքլնին և իր հարազատներուն, աղօթելով որ անոնք մնան միշտ առողջ հոգիով ու մարմինով:

Սիրոյ Ողջունիւ՝

Թորգոմ Արք. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի

Տուաւ Գիրս Օրհնութեան
Յամի Տեառն 2003
Օգոստոս 19-ին, Յերուսաղէմ

digitised by A.R.A.R.@